

6

ՀՈՒԼԻՍԻ
2020



ՀԱՅԱԿԱՆ ՔՅՈՒՋԵԻ
ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԻՂՆՈՒԹՅԱՄԲ ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՍՈՒԹՅԱՆ
ՍԻՍՏԻՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
(2018-2019ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՏՎԱԾ)

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(2018-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	1
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
ՀՀ կառավարության և «Իմ քայլը» դաշինքի ծրագրերով ստանձնած պարտավորությունները	3
ՀՀ կառավարության ծրագիր.....	3
«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր.....	4
ՄԱՍ 1. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	6
1.1. Կառավարության բյուջետային թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ...	7
1.2. Հանրային քննարկումներ	11
1.3. Ֆինանսական հաշվառում և հաշվետվողականություն	12
ՄԱՍ 2. ՀՀ 2019թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ 2020թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	14
2.1. ՀՀ պետական բյուջե	15
2.2. ՀՀ պետական բյուջեի եկամտային մաս	17
2.3. ՀՀ պետական բյուջեի ծախսային մաս	21
2.3.1. Մարդկային կապիտալի ֆինանսավորմանն ուղղված ծախսեր.....	25
2.3.2. Տարածքային կառավարմանն ու ենթակառուցվածքներին ուղղված ծախսեր .	28
2.4. Պետական պարտքի կառավարումը.....	36
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	43

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՓՀԻ	Փոխառության հատուկ իրավունքներ (Special Drowning Rights, SDR)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի գարնանը երկրում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները, անշուշտ, իրենց ազդեցությունը պետք է ունենային երկրի հիմնական ֆինանսական փաստաթղթի՝ ՀՀ պետական բյուջեի մշակման և իրագործման վրա: Ազգային ժողովում ունենալով կայուն մեծամասնություն՝ «Իմ քայլը» դաշինքը 2019 թվականից կարող էր մշակել ՀՀ պետական բյուջեն իր մոտեցումներին և հայտարարություններին համապատասխան և ապահովել դրա իրագործումը՝ իր կողմից հնչեցված «տնտեսական հեղափոխության» իրականացման կամ առնվազն դրա հիմքերի ստեղծման համար:

ՀՀ պետական բյուջեին և հանրային ֆինանսների կառավարմանն առնչվող դրույթները և նոր իշխանության գաղափարական մոտեցումներն իրենց արտահայտությունն են ստացել 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ՀՀ քաղաքացիների մեծամասնության աջակցությունը ստացած «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում¹ և ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ² ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» փաստաթղթում:

Սույն հետազոտության նպատակն է գնահատել ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրով ներկայացված խնդիրների հաղթահարման և 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ՀՀ քաղաքացիների մեծամասնության աջակցությունը ստացած «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրով տրված խոստումների կատարման ընթացքը՝ այդ ծրագրերի իրականացման նկատմամբ հանրային վերահսկողություն ապահովելու նպատակով:

Մասնավորապես, սույն աշխատանքում անդրադարձ է կատարվելու հանրային ֆինանսների ոլորտում ստանձնած պարտավորությունների մասով 2018 և 2019 թվականներին կատարված աշխատանքներին, գնահատվելու է, թե որքանով են դրանք համապատասխանում տրված խոստումներին, ինչպես նաև համեմատական վերլուծություն է կատարվելու ՀՀ՝ 2017, 2018, 2019 և 2020 թվականների պետական բյուջեների միջև:

¹ <https://www.civilcontract.am/news/im-qayl/im-k-ayle-dashink-i-nakhentrakan-tsragire>

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128281>

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԻՄ ՔԱՅԼԸ» ԴԱՇԻՆՔԻ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության ծրագիր

Հանրային ֆինանսների կառավարմանը և բյուջետային միջոցների արդյունավետ ու թափանցիկ օգտագործման խոստումները ՀՀ կառավարության ծրագրում հիմնականում շարադրված են «Պետական ֆինանսների կառավարումը» բաժնում (Բաժին 8): Դրանք են.

- ...Կառավարությունը հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության կրճատման ճանապարհով նախատեսում է **ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ** առավելագույն հնարավորի սահմաններում,

- ...Կառավարությունը կարևորելու է **հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը**: Այն ապահովելու նպատակով Կառավարությունը **ներդնելու է «հավելյալ արժեքի ստեղծման նպատակադրում ունեցող արդի գործիքակազմ»**, որը թույլ կտա հանրային ֆինանսների կառավարման համակարգում պլանային քանակական ցուցանիշներ սահմանելու մեթոդաբանությունից անցում կատարել **որակական ցուցանիշների սահմանմամբ թիրախային բյուջետավորման համակարգի**,

- Կառավարությունը որդեգրելու է այնպիսի մոտեցում, որն անաչառ կերպով գնալու է **պետական մեքենայի վրա ծախսվող յուրաքանչյուր դրամի հասցեականության և արդյունավետության հետևից**: Պետական կառավարման համակարգում հստակ ամրագրվելու է **գործառույթ-մարմին-պատասխանատվություն-արդյունք-գնահատական տրամաբանական շղթան**՝ կառավարման համակարգին հատուկ է լինելու համընդհանուր, ստանդարտացված, օբյեկտիվ մոտեցումների և ծախսարդյունավետ լուծումների սկզբունքը,

- Հանրային միջոցների օգտագործման հստակ ներգործությունը գնահատելու համար **ներդրվելու են հաշվետվողականության այնպիսի ստանդարտներ**, որոնք թույլ կտան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի գնահատման քանակական և որակական արդյունքային ցուցանիշների սահմանմամբ բարելավել ֆինանսական կարգապահությունը,

- Առաջիկա տարիներին ծախսային քաղաքականությունն ուղղվելու է մարդկային և ֆիզիկական կապիտալի կուտակմանը, զարգացմանը և իրացմանը, ինչպես նաև ներառական աճի խթանմանը և հավասարաչափ տարածքային

զարգացմանը: Այս ուղղությամբ նախատեսվում է **կրթության և գիտության, առողջապահության ոլորտների ֆինանսավորման աճ**, որը զուգակցվելու է ֆինանսական միջոցների նպատակային օգտագործմամբ,

- ...Ենթակառուցվածքներին ուղղվող միջոցների մշտադիտարկման համար **մշակվելու և ներդրվելու է էլեկտրոնային հարթակ**, ինչը թույլ կտա ցանկացած պահի տեղեկանալ իրականացվող ծրագրերի վիճակի մասին,

- ...Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար հնարավորության սահմաններում **կմեծանա մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին** ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը,

- Կառավարությունը նպատակ է դնում վերանայելու պետական կամ համայնքային հիմնարկների **արտաբյուջետային հաշիվներ ունենալու** քաղաքականությունը՝ ապահովելով սահմանված դեպքերում առաջացող դրամական միջոցների մուտքը համապատասխան բյուջե և հետագայում, ըստ անհրաժեշտության, այդ գումարների բաշխումն այդ բյուջեներից:

Այլ խոստումներից կարելի է առանձնացնել նաև հետևյալը. «Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հեղափոխական տնտեսական աճի ապահովման նպատակով՝ կշարունակվի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից **սուբվենցիաների տրամադրման գործընթացը, այն կդառնա ավելի ներառական ու մասնակցային**»:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրով տրված խոստումներից կարելի է առանձնացնել հետևյալը.

- ապահովելու ենք **գիտական գործունեության բյուջետային ֆինանսավորման ծավալների շարունակական ավելացում**, նախադրյալներ ենք ստեղծելու գիտական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար,

- Պետական բյուջեից առողջապահության ծախսերը վերը նշված պայմաններում **առաջիկա երեք տարիներին կայունացնելու ենք ՀՆԱ-ի 2 տոկոսի, իսկ հինգ տարիներին՝ ՀՆԱ-ի 3 տոկոսի** սահմաններում,

- հանրային **ֆինանսները տնօրինելու ենք նպատակային և խնայողաբար**՝ սահմանված նպատակին նվազագույն միջոցներով հասնելու տրամաբանությամբ,

- ներդնելու ենք հանրային ֆինանսների **կառավարման փորձաքննական համակարգ** և նախքան ծրագրի ֆինանսավորումը գնահատելու ենք նախատեսվող հատկացման համարժեքությունն ակնկալվող արդյունքին,

- ներդնելու ենք **«հավելյալ արժեքի ստեղծման նպատակադրում ունեցող արդի գործիքակազմ»**, որը թույլ կտա հանրային ֆինանսների կառավարման համակարգում պլանային քանակական ցուցանիշներ սահմանելու մեթոդաբանությունից անցում կատարել որակական ցուցանիշների սահմանմամբ թիրախային բյուջետավորման համակարգի,

- մշակելու ենք պետական ծառայողական և այլ նշանակությամբ շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներին հատկացվող **վառելիքի ձեռքբերման, սպառման ընթացակարգերի արդյունավետության գնահատման** (հատկացված վառելիքի դիմաց՝ ակնկալվող արդյունք տրամաբանությամբ), ինչպես նաև **վառելիքի գողոնի կանխման/բացահայտման առցանց համակարգ**,

- սահմանելու ենք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից միջազգային ստանդարտներով **ֆինանսական հաշվետվություններ հրապարակելու և տարեկան մեկ անգամ անկախ աուդիտ անցնելու պահանջ**,

- ներդնելու ենք **պետական պարտքի կառավարման էլեկտրոնային համակարգ**, ինչը թույլ կտա մշտադիտարկել ՀՀ ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ ստանալ տեղեկատվություն ստանձնած վարկային համաձայնագրերի կատարման ընթացքի, ձևավորված պարտավորության վճարների (հիմնականում կատարողականով սահմանված ժամանակացուցային շեղումների), դրամաշնորհային բաղադրիչների, տոկոսների և այլնի վերաբերյալ:

ՄԱՍ 1. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության ծրագիր

Թիրախ 1. ...Ենթակառուցվածքներին ուղղվող միջոցների մշտադիտարկման համար մշակվելու և ներդրվելու է էլեկտրոնային հարթակ, ինչը թույլ կտա ցանկացած պահի տեղեկանալ իրականացվող ծրագրերի վիճակի մասին,

Թիրախ 2. Հանրային միջոցների օգտագործման հստակ ներգործությունը գնահատելու համար ներդրվելու են հաշվետվողականության այնպիսի ստանդարտներ, որոնք թույլ կտան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի գնահատման քանակական և որակական արդյունքային ցուցանիշների սահմանմամբ բարելավել ֆինանսական կարգապահությունը:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Թիրախ 1. մշակելու ենք պետական ծառայողական և այլ նշանակությամբ շահագործվող ավտոտրասնայորտային միջոցներին հատկացվող վառելիքի ձեռքբերման, սպառման ընթացակարգերի արդյունավետության գնահատման (հատկացված վառելիքի դիմաց՝ ակնկալվող արդյունք տրամաբանությամբ), ինչպես նաև վառելիքի գողոնի կանխման/բացահայտման առցանց համակարգ,

Թիրախ 2. սահմանելու ենք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվություններ հրապարակելու և տարեկան մեկ անգամ անկախ աուդիտ անցնելու պահանջ:

Կառավարության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ՀՀ կառավարության ծրագրով համարվում է առաջիկա հինգ տարիների համար նախանշված նպատակին հասնելու առանցքային քայլերից մեկը: Թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովելու նպատակով կառավարության ծրագրով նույնիսկ կարևորվում է «պետության կողմից ծառայությունների մատուցման ոլորտում էլեկտրոնային գործիքների ներդրման միջոցով քաղաքացի-պետություն շփման հնարավորինս սահմանափակումը, պետական մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, տվյալների անփոփոխելիության, միասնականության և ավտոմատացման ապահովումը»:

1.1. Կառավարության բյուջետային թափանցիկությունն ու հաշվետվողականությունը

Դեռևս նախորդ իշխանության օրոք ՀՀ պետական բյուջեի և դրա իրականացման մասին տեղեկատվության հրապարակումները համարվել են պարտադիր պահանջ: ՀՀ պետական բյուջեները և ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները, օրենքի ուժով, հրապարակվել են իրավական տեղեկատվական համակարգում (www.arlis.am): Ստեղծվել էր «Ինտերակտիվ բյուջե» հարթակը, որը ներկայացնում էր ՀՀ պետական բյուջեով նախատեսված և ծախսված գումարները՝ ըստ ուղղությունների: Ինտերակտիվ բյուջեն այս տարբերակով հասանելի է դեռևս 2016 թվականից ՀՀ կառավարության³ և ՀՀ ֆինանսների նախարարության⁴ կայքերում:

Այսօր, սակայն, այս կայքերով ՀՀ պետական բյուջեի մասին տրամադրվող տեղեկատվությունը ունի առնվազն երկու կարևոր թերություն.

- Ինտերակտիվ բյուջեի տվյալները կարելի է հեշտությամբ հասկանալ և օգտագործել, եթե ուսումնասիրողը բավարար չափով ծանոթ է պետական բյուջեի և ինտերակտիվ բյուջեի կառուցվածքին: Ի տարբերություն ՀՀ կառավարության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը գրաֆիկական ներկայացմանը զուգահեռ փորձում է ՀՀ պետական բյուջեն ներկայացնել նաև աղյուսակային տեսքով: Սակայն երկու դեպքում էլ բացակայում են կայքերից օգտվելու ուղեցույցները, ինչն այցելուին կօգներ վերլուծություններ կատարելու կամ առկա տեղեկատվությունը հասկանալու գործում,

- ՀՀ ֆինանսների նախարարության կայքում ինտերակտիվ բյուջեն ներկայացվում է միայն ընթացիկ տարվա համար, այնինչ ՀՀ կառավարության կայքում ներկայացվում է նաև նախորդ տարիների ինտերակտիվ բյուջեն, ինչը կարևոր է թափանցիկության տեսանկյունից: Սակայն, ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ՀՀ կառավարությունը **չի տրամադրում 2018 թվականի ինտերակտիվ բյուջեն**, ինչը չի համապատասխանում նորաստեղծ կառավարության մոտեցումներին:

³ <https://www.e-gov.am/interactive-budget/>

⁴ <http://www.minfin.am/hy/page/grafik/>

Նկար 1. Ինտերակտիվ բյուջեի տեսքը ՀՀ կառավարության կայքում



Աղբյուր՝ <https://www.e-gov.am/>

Ուսումնասիրության ընթացքում հնարավոր չեղավ բացահայտել ՀՀ կառավարության և «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրով նախատեսված այլ առցանց համակարգերի/հարթակների գործունեությունը (վառելիքի գողոնի կանխման/բացահայտման առցանց համակարգ, ենթակառուցվածքներին ուղղվող միջոցների մշտադիտարկման էլեկտրոնային հարթակ): Ավելին, այսօր դեռևս անհասկանալի է, թե ինչպես է ՀՀ կառավարությունը տեսնում պետական ավտոտրանսպորտային միջոցներին հատկացվող վառելիքի արդյունավետության գնահատումը: Նույնիսկ եթե արդեն իսկ կիրառվում են այդպիսի ընթացակարգեր, դրանք հասանելի չեն հանրությանը, և հետևաբար հնարավոր չէ հանրային վերահսկողության տեսանկյունից գնահատել, թե ինչքանով է հատկացված վառելիքը ապահովել ակնկալվող արդյունքը: Այսինքն՝ կա՛մ խոստացված նոր համակարգերը ներդրված չեն, կա՛մ (եթե նման հարթակներ ներդրվել են, բայց գործում են փակ ռեժիմով) կառավարությունը չի ապահովում խոստացված թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Էլեկտրոնային համակարգերի ներդրման նման աշխատանքներ չկան նախատեսված ինչպես ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «ՀՀ կառավարության 2019–2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-L որոշմամբ⁵, այնպես էլ «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019–2023 թվականների բարեփոխումների

⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131287>

ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1716-Լ որոշմամբ⁶: Թեև գործողությունների ծրագրով նախատեսված է «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի» ներդրում, սակայն համակարգի ամբողջական ներդրումը նախատեսված է միայն 2022 թվականին: Հաշվի առնելով, որ համակարգից օգտվողների ուսուցումը կավարտվի նաև 2022-ին, կարելի է ենթադրել, որ համակարգը կարող է ամբողջապես աշխատել միայն 2023 թվականին:

Այսպիսով, ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված «Հանրային կառավարման թափանցիկության և հաշվեպնդականության ապահովման, վարչական կոռուպցիայի հաղթահարման նպատակով կարևորվում է պետության կողմից ծառայությունների մատուցման ոլորտում էլեկտրոնային գործիքների ներդրման միջոցով քաղաքացի-պետություն շփման հնարավորինս սահմանափակումը, պետական մարմինների գործունեության թափանցիկության, հաշվեպնդականության, տվյալների անփոփոխելիության, միասնականության և ավտոմատացման ապահովումը, ինչը կբարձրացնի որոշումների ընդունման ժամանակ կիրառվող տեղեկատվության հուսալիության և ամբողջականության աստիճանը» և «Կառավարությունը որդեգրելու է այնպիսի մոտեցում, որն անաչառ կերպով գնալու է պետական մեքենայի վրա ծախսվող յուրաքանչյուր դրամի հասցեականության և արդյունավետության հետևից: Պետական կառավարման համակարգում հստակ ամրագրվելու է գործառույթ-մարմին-պատասխանատվություն-արդյունք-գնահատական տրամաբանական շղթան՝ կառավարման համակարգին հատուկ է լինելու համընդհանուր, սրանդարտացված, օբյեկտիվ մոտեցումների և ծախսարդյունավետ լուծումների սկզբունքը» **խոստումները լավագույն դեպքում կարող են իրականություն դառնալ միայն 2023-ին և ոչ ավելի շուտ:**

Այդ համակարգի ներդրումը ՀՀ ֆինանսների նախարարությունը նախատեսել էր իրականացնել դեռևս 2020 թվականին (տե՛ս «15. Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների վերանայված ռազմավարությանը, պետական ֆինանսների կառավարման ոլորտում առկա խնդիրներին և դրանց լուծմանն ուղղված միջոցառումներին ու պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2016-2020 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի թիվ 6 արձանագրությունից քաղվածքը ⁷), ինչը, սակայն, իշխանափոխությունից հետո չի իրականացվել: Եթե ֆինանսների նախարարությունն ի

⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137596>

⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=103911>

վիճակի էր համակարգը ներդնել մինչև 2020 թվականը, անհասկանալի է, թե ինչու է այն հետաձգվել մինչև 2023 թվականը:

ՀՀ ներկայիս կառավարության նորարարություն չի կարելի համարել նաև ՀՀ պետական բյուջեի կատարման մասին պարզեցված հաշվետվության հրապարակումը⁸, որի նպատակն է «մատչելի կերպով հանրությանը ներկայացնել տնտեսությունում արձանագրված հիմնական միտումների և պետական բյուջեի կատարման վերաբերյալ», քանի որ առաջին նման փաստաթուղթը հրապարակվել էր դեռևս նախորդ իշխանության օրոք՝ 2017 թվականին:

Բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման գնահատման մեխանիզմներից է **պետական գնումների համակարգը**: Թեև պետական գնումների իրականացման ընթացակարգերի և մեթոդների վերլուծությունը առանձին ուսումնասիրության առարկա է, փորձենք այս հատվածում կարճ անդրադարձ կատարել պետական գնումների ընթացակարգերից մեկին՝ մեկ անձից գնմանը, քանի որ միջազգային պրակտիկայում գնման այս ընթացակարգին կարելի է դիմել միայն առանձնահատուկ դեպքերում: Իսկ մեկ անձից գնման ընթացակարգի հաճախակի կիրառումը վկայում է պետական միջոցների ոչ արդյունավետ օգտագործման բարձր ռիսկի մասին:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2018 թվականի գնումների հաշվետվության⁹ 2018 թվականին կազմակերպվել են 118.141 ընթացակարգ, որոնցից 56.444-ը կամ **գնումների 47,8%-ը՝ որպես մեկ անձից կատարված գնում**: Գումարային արտահայտությամբ՝ 2018 թվականին իրականացված 259.681,6 մլն դրամ գնումների 50,6%-ն իրականացվել է մեկ անձից գնումների տեսքով: Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին իրականացված գնումների ընդհանուր արժեքի միայն 9%-ն է իրականացվել մեկ անձից կատարված գնումների միջոցով: Այսինքն՝ **2018 թվականին զգալիորեն աճել է մեկ անձից գնումների թիվը, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման խոստումներին**:

Գնումների հաշվետվողականության համակարգում (www.armeps.am) տեղադրված տեղեկատվության համաձայն՝ 2019 թվականին ներկայացված 224.659 կայացած ընթացակարգերից 12.202-ը կամ ընդհանուրի 5%-ը իրականացվել է մեկ անձից գնումների տեսքով՝ 105 279,4 մլն դրամ գումարով¹⁰: Իհարկե, տարբերությունը 2018

⁸ http://www.minfin.am/hy/page/hh_petakan_byujei_parzecvats_hashvetvutyun

⁹

<http://gnumner.am/website/images/original/2018%20%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.docx>

¹⁰ Այս ցուցանիշները դեռևս բավական հեռու են պաշտոնական լինելուց և հաշվարկվել են՝ հիմք ընդունելով գնումների հաշվետվողականության համակարգի ընձեռած հնարավորությունները:

թվականի համեմատ զգալի է, սակայն ամբողջական համեմատություն 2018 թվականի հետ հնարավոր կլինի կատարել միայն 2019 թվականի գնումների տարեկան հաշվետվության հրապարակումից հետո (եթե իհարկե ՀՀ ֆինանսների նախարարությունը նախատեսում է նման հաշվետվության հրապարակումը)¹¹:

1.2. Հանրային քննարկումներ

Պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) մշակման գործում կարևոր նշանակություն ունի հանրային քննարկումների կազմակերպումը¹²: 2020թ. բյուջետային գործընթացի շրջանակներում նախարարություններն ու գերատեսչությունները կազմակերպել են 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջետային հայտերի հանրային քննարկումներ: Սակայն այդ հանդիպումներն ու քննարկումները կազմակերպվել են գործընթացի բավական ուշ փուլերում, երբ ներկայացված հայտում փոփոխությունների կատարումը իրատեսական լինել չէր կարող, կամ էլ գործընթացն իրականացվել է սահմանված ժամանակացույցից նկատելի շեղումներով:

Այսպես, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 22-ի թիվ 289-Ա որոշման¹³ հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան, հայտատու մարմինների կողմից ներկայացված ՄԺԾԾ-ի (ներառյալ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի) հայտերի շուրջ քննարկումները ՀՀ վարչապետի հետ պետք է ավարտվեին մինչև 2019 թվականի հունիսի 17-ը: Մինչ այդ՝ մինչև 2019 թվականի հունիսի 10-ը, ՀՀ ֆինանսների նախարարությունը պետք է ավարտեր ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացման նպատակով համապատասխան տեղեկանքի մշակումը: Սա ենթադրում է, որ հանրային քննարկումները և ՄԺԾԾ-ի ու բյուջետային հայտերի վերջնական ճշգրտումները պետք է կատարված լինեին մինչ այդ:

Սակայն, ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ շատ դեպքերում հանրային քննարկումները կազմակերպվել են հունիսի առաջին տասնօրյակում¹⁴:

Ավելին, երբեմն հանրային քննարկումները կազմակերպվել են ոչ թափանցիկ: Այսպես, եթե ՀՀ քննչական կոմիտեն նախօրոք հայտարարություն էր տարածել հանրային քննարկում կազմակերպելու մասին¹⁵ կամ Դատական դեպարտամենտի օրինակով քննարկումներն անցկացվել էին լրատվամիջոցների մասնակցությամբ, ապա

¹¹ 2017 և 2018 թվականներին ՀՀ ֆինանսների նախարարությունը հրապարակում էր գնումների եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչը բացակայում է 2019 թվականին:

¹² Հանրային քննարկումների իրականացման կարգը սահմանված է «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 296-Ն որոշմամբ

¹³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=129059>

¹⁴ <https://ccd.armla.am/13366.html>

¹⁵ <http://investigative.am/news/view/2020-byuje-qnnarkum.html>

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը միանգամից հրապարակել էր արդեն իսկ անցկացված հանրային քննարկման մասին, այն էլ ընդամենը երկու կառույցների մասնակցությամբ¹⁶:

Ուշացումով է սկսվել նաև բյուջետային հայտերի քննարկման գործընթացը: Այսպես, համաձայն պաշտոնական աղբյուրներում հրապարակված տեղեկատվության (ՀՀ վարչապետի կայք), ՀՀ վարչապետի մոտ նախարարությունների 2020թ. բյուջետային հայտերի քննարկումները կազմակերպվել են 2019 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր¹⁷ ամիսներին՝ ՀՀ պետական բյուջեի նախագիծը կառավարության արտահերթ նիստում հավանության արժանանալուց¹⁸ (2019թ. սեպտեմբերի 30) և ՀՀ ԱԺ ներկայացվելուց հետո: Այսինքն՝ բյուջեի նախագիծը կազմելիս խախտվել է սահմանված ժամանակացույցը. մինչև բյուջեն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելը բյուջետային հայտերի քննարկումներ կազմակերպելու ու դրանց հիման վրա բյուջեն վերջնականացնելու փոխարեն՝ կառավարությունը պետական մարմինների հետ վերջիններիս կողմից ներկայացված բյուջետային հայտերը փաստորեն քննարկել է բյուջեն ԱԺ ներկայացնելուց հետո:

Այսպիսով, կարելի է փաստել, որ 2020 թվականի բյուջեյային գործընթացում ոչ միայն բացակայում են նորարարությունները, այլև նկատվում է բյուջեյային գործընթացի ժամանակացույցի խախտումներ, իսկ ՀՀ կառավարության կողմից բացակայում է հանրային քննարկումների և հասարակական հարվածի հերթերկիստության միասնական և համընդգրկուն մոտեցում, ինչը չի համապատասխանում թափանցիկության ապահովման մասին ՀՀ կառավարության հայրարարությունների և խոստումների ոգուն:

1.3. Ֆինանսական հաշվառում և հաշվետվողականություն

Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումն իրականացվում է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» 2014թ. թիվ ՀՕ-970-Ն օրենքին¹⁹ համապատասխան: Սույն օրենքով են սահմանվում հանրային հատվածի կազմակերպությունների

¹⁶ <https://mineconomy.am/news/1758>

¹⁷ Օրինակ, հոկտեմբերի 9-ին քննարկել են շրջակա միջավայրի (<https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/10/09/Budget-Discussion/>), 14-ին՝ աշխատանքի և սոցիալական հարցերի (<https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/10/14/Nikol-Pashinyan-Meeting/>), 16-ին՝ արտաքին գործերի (<https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/10/16/Nikol-Pashinyan-Meeting/>), 22-ին՝ արդարադատության (<https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/10/22/Budget-meeting/>), 23-ին՝ էկոնոմիկայի (<https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/10/23/Nikol-Pashinyan-Meeting/>), 25-ին՝ արտակարգ իրավիճակների (<https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/10/25/Budget-meeting/>), նոյեմբերի 5-ին՝ առողջապահության (<https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/11/05/Budget-meeting/>) նախարարությունների բյուջետային հայտերը

¹⁸ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/09/30/Cabinet-meeting/>

¹⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=91454>

հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) պատրաստելու և ներկայացնելու միասնական հիմունքները, ինչպես նաև հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ հարաբերությունները:

Սույն օրենքում առայժմ չի կատարվել ոչ մի փոփոխություն: Իսկ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրված «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով²⁰ չի նախատեսվում միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվություններ հրապարակելու պահանջ՝ չնայած նման խոստում նախատեսված էր «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում:

Հարկ է նշել, որ տվյալ պարտավորությունը շատ կարևոր է պետության ակտիվների հստակ հաշվառման և կառավարման համար: Այլ կերպ ասած՝ տվյալ օրենքի կիրառման արդյունքում պետական բոլոր կազմակերպությունները կունենան հստակ և միանման հաշվառում, ինչը խիստ անհրաժեշտ է հսկողական համակարգերի գործունեության և թափանցիկության համար: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունն առայժմ չի շտապում ներդնել այդ մոտեցումները ՀՀ պետական կառավարման համակարգում և անհասկանալի է, թե ինչու են հետաձգում դրանց ներդրումը, եթե մինչև իշխանափոխությունը կարող էին այդ ամենն անել մինչև 2020 թվականը:

Այսպիսով, ՀՀ պետական բյուջեի թափանցիկության ապահովման և հանրային միջոցների օգտագործման վերաբերյալ ՀՀ կառավարության և իշխող քաղաքական ուժի խոստումներն առայժմ իրականություն չեն:

²⁰ <https://www.e-draft.am/projects/2171/about>

ՄԱՍ 2. ՀՀ 2019Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ 2020Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության ծրագիր

Թիրախ 1. ...Կառավարությունը հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության կրճատման ճանապարհով նախատեսում է ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ առավելագույն հնարավորի սահմաններում,

Թիրախ 2. ...Կառավարությունը կարևորելու է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը: Այն ապահովելու նպատակով Կառավարությունը ներդնելու է «հավելյալ արժեքի ստեղծման նպատակադրում ունեցող արդի գործիքակազմ», որը թույլ կտա հանրային ֆինանսների կառավարման համակարգում պլանային քանակական ցուցանիշներ սահմանելու մեթոդաբանությունից անցում կատարել որակական ցուցանիշների սահմանմամբ թիրախային բյուջետավորման համակարգի,

Թիրախ 3. Առաջիկա տարիներին ծախսային քաղաքականությունն ուղղվելու է մարդկային և ֆիզիկական կապիտալի կուտակմանը, զարգացմանը և իրացմանը, ինչպես նաև ներառական աճի խթանմանը և հավասարաչափ տարածքային զարգացմանը: Այս ուղղությամբ նախատեսվում է կրթության և գիտության, առողջապահության ոլորտների ֆինանսավորման աճ, որը զուգակցվելու է ֆինանսական միջոցների նպատակային օգտագործմամբ,

Թիրախ 4. ...Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար հնարավորության սահմաններում կմեծանա մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Թիրախ 1. ապահովելու ենք գիտական գործունեության բյուջետային ֆինանսավորման ծավալների շարունակական ավելացում, նախադրյալներ ենք ստեղծելու գիտական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար,

Թիրախ 2. պետական բյուջեից առողջապահության ծախսերը վերը նշված պայմաններում առաջիկա երեք տարիներին կայունացնելու ենք ՀՆԱ-ի 2 տոկոսի, իսկ հինգ տարիներին՝ ՀՆԱ-ի 3 տոկոսի սահմաններում,

Թիրախ 3. հանրային ֆինանսները տնօրինելու ենք նպատակային և խնայողաբար՝ սահմանված նպատակին նվազագույն միջոցներով հասնելու տրամաբանությամբ,

Թիրախ 4. ներդնելու ենք «հավելյալ արժեքի ստեղծման նպատակադրում ունեցող արդի գործիքակազմ», որը թույլ կտա հանրային ֆինանսների կառավարման համակարգում պլանային քանակական ցուցանիշներ սահմանելու մեթոդաբանությունից անցում կատարել որակական ցուցանիշների սահմանմամբ թիրախային բյուջետավորման համակարգի:

2.1. ՀՀ պետական բյուջե

Համաձայն ՀՀ կառավարության ծրագրի՝ հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերջինիս գործունեության հիմնարար ուղենիշներից է «հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը», որն ապահովելու նպատակով կառավարությունը նախատեսում է հանրային ֆինանսների կառավարման համակարգում պլանային քանակական ցուցանիշներ սահմանելու մեթոդաբանությունից անցում կատարել որակական ցուցանիշների սահմանմամբ թիրախային բյուջետավորման համակարգի: Այն իրականացնելու համար ՀՀ պետական բյուջեն պետք է ամբողջությամբ անցում կատարի ծրագրային բյուջետավորման՝ հստակ սահմանելով չափելի և հասանելի արդյունքներ:

Ծրագրային բյուջետավորումը ²¹ կառավարության, Ազգային ժողովի, ՀՀ քաղաքացիների և հասարակության այլ անդամների համար պետք է հասանելի և հասկանալի դարձնի հանրային միջոցների (բարիքի) վերաբաշխման, այդ թվում՝ իրականացվող ծախսերի և ծրագրերի նպատակները, արդյունքները և դրանց գնահատման չափանիշները: Այսինքն, ծրագրային բյուջետավորման ժամանակ հիմնական ուշադրությունը սևեռվում է բյուջետային հատկացումների հիման վրա ստեղծված արդյունքին:

Հարկ է նշել, որ Հայաստանում ծրագրային բյուջետավորմանն անցնելու հայեցակարգային որոշումն ընդունվել է դեռևս նախորդ կառավարության գործունեության ժամանակահատվածում, և նման փոփոխությունը պլանավորված էր դեռևս 2015 թվականից:

Թեև ՀՀ կառավարությունը պնդում է, որ 2019-ից ամբողջությամբ անցում է կատարել ծրագրային բյուջետավորման ձևաչափին: Սակայն այն դեռևս անկատար է՝ հատկապես երբ խոսքը գնում է բյուջետային ծրագրերի համապատասխանությանը ոլորտային ռազմավարություններին և դրանց նպատակներին:

Բյուջեի հավելվածներում ներկայացված են նախարարությունների և գերատեսչությունների կողմից իրականացվող ծրագրերն ու միջոցառումները, դրանց զգալի մասի դեպքում՝ նաև ոչ ֆինանսական ցուցանիշները: Սակայն եթե պետական բյուջեն ձևով ծրագրային է, բովանդակության, կառուցվածքի և կատարման մեխանիզմների առումով այն դեռևս բարելավման կարիք ունի: Գանձապետական

²¹ Ծրագրային բյուջետավորումն իրենից ներկայացնում է բյուջետավորման մի եղանակ, որի ժամանակ ողջ բյուջետային գործընթացը հիմնվում է բյուջեի շրջանակներում իրականացվող ծրագրերի վրա: Ծրագրային կառուցվածքով բյուջեն տեղեկացնում է նպատակների և արդյունքների մասին՝ հնարավորություն տալով այդ տեղեկատվությունն օգտագործել բյուջետային միջոցների օգտագործման համապատասխանությունը երաշխավորելու և այդ ռեսուրսների օգտագործման արդյունքայնությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու համար (տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 13.08.2015թ. թիվ 38 արձանագրային որոշումը):

համակարգի միջոցով սպասարկվող կառույցների նկատմամբ պահպանվում են ֆինանսական հսկողության նույն մեխանիզմները, ինչ նախկինում: Այսինքն՝ հսկողություն է իրականացվում ոչ թե մատուցվող ծառայությունների քանակի, որակի և ժամկետայնության նկատմամբ, այլ ծախսերի տողային՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, ցուցանիշների նկատմամբ: Հստակ նկարագրված չեն մի շարք ծրագրեր, դրանց նպատակները, ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշները, իսկ պետական բյուջեով նախատեսված ծրագրային միջոցառումները պարբերաբար ենթարկվում են փոփոխությունների՝ առանց ներկայացնելու, թե ինչպես են նոր միջոցառումները նպաստում վերջնական նպատակին հասնելուն: Այսպիսով, կարելի է փաստել, որ **կառավարությունը ֆորմալ առումով անցում կատարել է դեպի ծրագրային բյուջեավորման, սակայն դեռ չի հասել «որակական ցուցանիշների սահմանմամբ թիրախային բյուջեավորման համակարգի» ամբողջական ներդրմանը:** Առայժմ հստակ չեն նշված խնդիրը լուծելու ուղղությամբ ՀՀ կառավարության ձեռնարկած քայլերը:

Ծրագրային բյուջեավորման համակարգի ամբողջական ներդրմամբ է պայմանավորված կառավարության մեկ այլ խոստման իրականացումը. այն է՝ «Կառավարությունը որդեգրելու է այնպիսի մոտեցում, որն անաչառ կերպով գնալու է պետական մեքենայի վրա ծախսվող յուրաքանչյուր դրամի հասցեականության և արդյունավետության հետևից:» Քանի դեռ հստակորեն չեն սահմանվում հատկացվող գումարների արդյունքները և գնահատման չափանիշները, կառավարությունը չի կարող ապահովել անհրաժեշտ ծախսարդյունավետություն և արդյունք:


Հայաստանի Հանրապետության 2020 թվականի համախմբված բյուջեն գնահատվում է եկամուտների գծով՝ 1,740.8 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 1,901.5 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների): Բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) նախատեսվում է 160.7 մլրդ դրամ, ինչը գերազանցում է 2019 թվականի ցուցանիշը²² 108,3 մլրդ դրամով: Ընդ որում, այն մոտ 55 մլրդ դրամով ավելի է 2018 թվականի ցուցանիշից և ավելի քան 100 մլրդ դրամով պակաս 2017 թվականին արձանագրված բյուջեի դեֆիցիտից: Սակայն եթե 2017-2019 թվականներին նկատվում էր դեֆիցիտի անկում, ապա 2020 թվականին պետական բյուջեի դեֆիցիտն աճում է:

ՀՀ 2020թ. պետական բյուջեի եկամուտները կկազմեն 1.695,0 մլրդ դրամ, 8,3%-ով ավելի, քան 2019 թվականի ցուցանիշը: Եթե եկամտային մասով յուրաքանչյուր տարի նկատվում է եկամուտների աճ, ապա ծախսային մասով դա այդպես չէ: Օրինակ, 2018 թվականին կատարված ծախսերն ավելի քիչ էին քան 2017 թվականինը: Արդյունքում, 2019 թվականի բյուջեի ծախսերը 8,3%-ով էին ավելի 2017 թվականի փաստացի

²² Ըստ ՀՀ 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության՝ տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=57841>

ծախսերի ցուցանիշից, իսկ 2020 թվականի նախատեսվածը՝ 13,9%-ով 2019 թվականի ծախսերի համեմատ:

Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեների եկամուտները և ծախսերը, 2016-2020թթ. (մլրդ ՀՀ դրամ)



Աղբյուր՝ 2016-2019թթ. ՀՀ պետական բյուջեի հաշվետվություն, 2020 թվականի պետական բյուջե:

2.2. ՀՀ պետական բյուջեի եկամտային մաս


Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ բյուջետային մուտքերը ներառում են տվյալ բյուջեին օրենքով ամրագրված բյուջետային եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, բյուջեից տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գումարների վերադարձից, ոչ դրամային տեսքով այլ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող, ինչպես նաև ներգրավված փոխառու և այլ դրամական միջոցները: Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքը, պետական բյուջեի եկամուտները, ըստ ձևավորման աղբյուրների, դասակարգում է հետևյալ խմբերի.

- Հարկային եկամուտներ և պետական տուրքեր
- Պաշտոնական դրամաշնորհներ
- Այլ եկամուտներ

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով²³, պետական բյուջեի եկամուտները կազմում են 1,695,009,852.1 հազ. ՀՀ դրամ, ինչը գերազանցում է ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտների փաստացի ցուցանիշը 8,3%-ով, կամ մոտ 129,5 մլրդ դրամով: 2020 թվականի բյուջեի եկամուտների զգալի մասը՝ 94,5%-ը, նախատեսվում է ապահովել հարկերից և պետական տուրքերից ստացվող մուտքերի հաշվին:

Պետական բյուջեի եկամուտները 2020 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 23,9%-ը՝ գրեթե չտարբերվելով 2019 թվականի պետական բյուջեի փաստացի ցուցանիշից (23.8%) ²⁴, սակայն գերազանցում է 2017 և 2018 թվականների ցուցանիշները համապատասխանաբար 1,7 և 1,6 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. 2017-2020թթ. պետական բյուջեների եկամուտները



Աղբյուր՝ 2017-2019թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություն, 2020 թվականի պետական բյուջե:

Հարկերն ու տուրքերն ապահովել են 2019թ. պետական բյուջեի մուտքերի 93.5%-ը, 2018 և 2017 թվականների 93,8% ու 93,6% համեմատությամբ: Հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմում են 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների 94,5%-ը՝ մեկ տոկոսային կետով ավելի 2019 թվականի համեմատ:

²³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137645>

²⁴ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություն, http://www.parliament.am/draft_docs7/K-599_hashvetvutyun.pdf

Աղյուսակ 1. ՀՀ պետական բյուջեի փաստացի եկամուտները 2017-2019 թվականներին (մլրդ դրամ)

Պետական բյուջեի եկամուտները	2017	2018	2019
Եկամուտներ	1 237.8	1 341.7	1 565.5
1. Հարկեր և տուրքեր, այդ թվում՝	1 158.0	1 258.1	1 464.3
ավելացված արժեքի հարկ	406.6	438.2	506.5
ակցիզային հարկ	82.3	109.0	138.6
շահութահարկ	109.9	170.1	233.8
պետական տուրք	37.1	37.9	45.9
մաքսատուրք	72.6	80.2	95.1
բնապահական և բնօգտագործման վճարներ	42.2	54.3	63.7
հաստատագրված վճարներ	3.6	0.3	-
շրջանառության հարկ	18.2	21.3	31.6
եկամտային հարկ	341.5	356.6	440.8
սոցիալական վճարումներ	15.8	17.4	18.7
այլ հարկեր	28.2	28.2	25.3
հարկերի անցումային գերավճար	-	-55.3	- 135.7
2. Այլ եկամուտներ	65.2	72.3	88.8
3. Պաշտոնական դրամաշնորհներ	14.6	11.2	12.4

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

2018 թվականի համեմատ, 2019 թվականին հարկերի և տուրքերի մասով մուտքերն աճել են գրեթե 16%-ով, սակայն կառուցվածքային առումով դրանք էական փոփոխության չեն ենթարկվել: 2019 թվականին հարկային մուտքերի զգալի մասն ապահովում է ավելացված արժեքի հարկը (34.6%), որին հաջորդում է եկամտային հարկը՝ 30,1%: Ընդ որում, ավելացված արժեքի հարկը 2019 թվականի ընթացքում, 2018 թվականի համեմատ, ավելացել է մոտ 16%-ով կամ ավելի քան 68 մլրդ ՀՀ դրամով: 18,6%-ով կամ 14,9 մլրդ դրամով աճել են նաև մաքսատուրքերից ստացվող եկամուտները: Քանի որ 2019 թվականի ընթացքում արձանագրվել է վերգետնյա տրանսպորտի միջոցների գումարային արտահայտությամբ ներմուծման աճ մոտ երկու

անգամ (կամ ավելի քանի 397 մլն ԱՄՆ դոլարով)²⁵, ակնհայտ է, որ դրանով է առավելապես պայմանավորված ԱԱՀ-ի նման աճը²⁶: Շուրջ 37%-ով (կամ 63,7 մլրդ դրամով) աճել է շահութահարկը: Միաժամանակ, մոտ 2,5 անգամ աճ է գրանցվել նաև հարկերի անցումային գերավճարների²⁷ մասով, ինչը բացակայում էր 2017 թվականին:

2020 թվականին ամենայն հավանականության կլինի ԱԱՀ-ի գծով հարկային մուտքերի անկում. հաշվի առնելով տրանսպորտային միջոցների ներմուծման արտոնյալ ցածր մաքսատուրքերի կիրառման անցումային ժամանակահատվածի ավարտված լինելու հանգամանքը՝ 2020 թվականին այս մասով ՀՀ-ն երրորդ երկրներից կունենա էապես ավելի քիչ ներմուծում, քան ունեցել է վերջին տարիներին և հատկապես 2019 թվականին: Իսկ քանի որ ԱԱՀ-ն հանդիսանում է հիմնական մուտքեր ապահովող հողվածներից մեկը, հստակ չէ, թե ինչպես է կառավարությունը կանխատեսում 2020 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի աճ շուրջ 128 մլրդ դրամով՝ 2019 թվականի փաստացի բյուջեի նկատմամբ:

Հարց է առաջանում, թե ինչի հաշվին պետք է ապահովվի հարկային եկամուտների և պետական տուրքերի նշված աճը: Եթե ՀՀ կառավարությունը այդ աճը նախատեսում է ապահովել նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացման շնորհիվ սպասվող եկամտային հարկերի աճից, ապա այս դեպքում պետք է հաշվի առնել մի քանի հանգամանք՝

- եկամտային հարկի համահարթեցմամբ պայմանավորված՝ 2020 թվականին կնվազի բարձր եկամուտ ունեցող անձանց եկամտահարկից մուտքերը: Իհարկե, դրա մի որոշ մասը կարող է փոխհատուցվել եկամտային հարկի համահարթեցման շնորհիվ ստվերից դուրս բերվող աշխատավարձից ստացվող հնարավոր հարկերի շնորհիվ, ինչը, սակայն, մեր գնահատմամբ չի կարող լինել համադրելի ցուցանիշ.
- հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների փոխհատուցման քննարկվող դադարեցումը կամ փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունը կարող են ունենալ եկամտային հարկի ծավալների վրա: Գաղտնիք չէ, որ այդ գումարների փոխհատուցումն ունի մուլտիպլիկատիվ ազդեցություն՝ նպաստելով շինարարության ոլորտի զարգացմանը, ինչն իր հերթին հանգեցնում է այդ ոլորտում ներգրավված անձանց եկամուտների գոյացմանը և հարկերի ձևավորմանը: Դադարեցնելով փոխհատուցման գործընթացը՝ այն էականորեն

²⁵ https://www.armstat.am/file/article/sv_12_19a_411.pdf


²⁶ Գաղտնիք չէ, որ վերգետնյա տրանսպորտային միջոցների ներմուծման նման աճը պայմանավորված է 2020-ին տրանսպորտային միջոցների ներմուծման ՀՀ մաքսային դրույքաչափերը ԵԱՏՄ մաքսային դրույքաչափերին համապատասխանեցնելով: Եվ քիչ հավանական է, որ ներմուծումների զգալի մասը լինի ԵԱՏՄ երկրներից (որոնց համար գործում է ԱԱՀ վճարման առանձին կարգ և չի գանձվում մաքսատուրք): Գումարային առումով զգալի աճ չի արձանագրվել նաև մյուս ներմուծվող ապրանքային խմբերում:

²⁷ Անցումային գերավճարը որևէ հարկային պարտավորությունից ավելի պետական բյուջե փաստացի կատարված վճարումների հանրագումարն է:

կնվազեցնի բնակարանաշինությունը և շինարարական կազմակերպությունների եկամուտները՝ հանգեցնելով նրանց աշխատակիցների ազատման և եկամտային հարկերի նվազեցման:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2019 թվականի ցուցանիշների՝ հարկեր և տուրքեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 22,3% կամ 1,3 տոկոսային կետով ավելի, քան 2018 թվականի ցուցանիշը: Ընդ որում, 2018 թվականին այդ ցուցանիշը գրեթե չի փոփոխվել 2017-ի նույն ժամանակահատվածի համեմատ: 2020 թվականի պետական բյուջեով թեև կանխատեսվում է եկամուտների և ՀՆԱ աճ, այս հարաբերակցությունը էականորեն չի տարբերվի 2019 թվականի ցուցանիշից:

Գծապատկեր 3. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2017-2020թթ.



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

Այսպիսով, թեև 2018-2019 թվականներին վիճակագրությունը կարող է փաստել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման ՀՀ կառավարության խոստման իրականացումը, այնուամենայնիվ, այդ աճի տեմպը զգալիորեն կնվազի 2020 թվականին: Հետևաբար, ՀՀ իշխանությունների կողմից «աննախադեպ» և «հեղափոխական» գնահատված բյուջեն այս առումով կարծես այդպիսին չէ, իսկ տրված խոստումը կարող է իրականություն չդառնալ:

2.3. ՀՀ պետական բյուջեի ծախսային մաս

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, պետական բյուջեն ծախսերի մասով կազմում է 1.855,7 մլրդ ՀՀ դրամ՝ շուրջ 226 մլրդ ՀՀ դրամով ավելի, քան 2019 թվականի փաստացի բյուջեն: Ընդ որում այս ցուցանիշը մշտապես գրանցել է աճ՝ գերազանցելով 2017 թվականի նախատեսված բյուջեն 36%-ով:

Ի տարբերություն նշված ցուցանիշի՝ համայնքների բյուջեի ծախսային մասի փոփոխությունն էական չէ՝ 2017 թվականի համեմատ համայնքային բյուջեի ծախսային մասը 2020թ. բյուջեում ավելացել է ընդամենը 7%-ով:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը բաժանվում են կապիտալ կամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի²⁸ և ընթացիկ ծախսերի: Ընթացիկ ծախսերը կազմում են բյուջետային ծախսերի գերակշիռ մասը՝ 2020 թվականի պետական բյուջեի 84,5%-ը:

Աղյուսակ 2. ՀՀ պետական բյուջեի կապիտալ և ընթացիկ ծախսերը 2017-2020թթ. (մլն դրամ)²⁹

	2017		2018		2019		2020 Կանխատեսում
	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	
Ընթացիկ ծախսեր (հազ. ՀՀ դրամ)	1.294.321,4	1.267.436,7	1.337.439,3	1.298.977,9	1.500.498,3	1.437.142,9	1.568.161,8
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (հազ. ՀՀ դրամ)	266.975,8	238.385,9	205.398,7	151.988,1	262.421,8	193.294,0	287.741,0
Ընթացիկ ծախսեր (%)	82,9	84,2	87,6	89,8	85,1	88,2	84,5
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (%)	17,8	15,8	13,4	10,5	14,9	11,8	15,5

Աղբյուր՝ 2017-2019թթ. ՀՀ պետական բյուջեի հաշվետվություն, 2020 թվականի պետական բյուջե:

Ակնհայտ է, որ, 2018 թվականի համեմատ, 2019 և 2020 թվականներին ավելացել է կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեում, սակայն այն դեռևս չի գերազանցել 2017 թվականի ցուցանիշը, երբ կապիտալ ծախսերը կազմել են պետական բյուջեի ծախսերի 15,8%-ը: Այս ցուցանիշը գումարային առումով ևս էականորեն չի տարբերվում 2017 թվականին հատկացված գումարից. 2020 թվականին

²⁸ Պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների (հիմնական ֆոնդերի), բարձրարժեք ակտիվների, չարտադրված ակտիվների, պետական ռազմավարական և համայնքային նշանակության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների ստեղծմանը (ծեռքերմանը) կամ դրանց արժեքի ավելացմանը:

²⁹ Այստեղ ներառված չեն «ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը»

նախատեսվում է հատկացնել ընդամենը 50 մլրդ ավելի, քան 2017-ի փաստացին է եղել, կամ ընդամենը 21 մլրդ ավելի, քան 2017-ի նախատեսվածն է եղել: Ի դեպ, կապիտալ ծախսերը 2017 թվականի համեմատ զգալիորեն նվազել են 2018 և 2019 թվականներին: Այսպես, եթե 2017 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով փաստացի կատարված ծախսերը (կապիտալ ծախսերը) կազմել են ՀՀ պետական բյուջեի 15,8%-ը կամ մոտ 238 մլրդ ՀՀ դրամ, ապա 2018 և 2019 թվականներին դրանք կազմել են բյուջեի ծախսերի համապատասխանաբար 10,5 և 11,8 տոկոսը, կամ 152 մլրդ և 193 մլրդ դրամ: Այսինքն՝ 2019 թվականին մոտ 40 մլրդ դրամ քիչ գումար է հատկացվել կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը 2017 թվականի հետ համեմատած:

2020 թվականին նախատեսված կապիտալ ծախսերից 115,3 մլրդ դրամը նախատեսվում է հատկացնել ներքին միջոցների հաշվին, ինչը կազմում է կապիտալ ծախսերի մոտ 40%-ը, իսկ մնացած 172,4 մլրդ դրամի կապիտալ ծախսերը նախատեսվում է իրականացնել օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին: Ներքին միջոցների հաշվին հատկացվող կապիտալի ծախսերի զգալի մասը, մոտ 74% կամ 84 մլրդ ՀՀ դրամ նախատեսվում է հատկացնել կառուցման աշխատանքներին, որի հիմնական մասը, մոտ 81 մլրդ ՀՀ դրամ հատկացվելու է պաշտպանության համակարգին³⁰: Կապիտալ ծախսերի երկրորդ խոշոր ուղղությունը վերականգնման, վերակառուցման և վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով հատկացվող գումարներն են՝ մոտ 23 մլրդ ՀՀ դրամ: Այս գումարների զգալի մասը՝ 21,6 մլրդ ՀՀ դրամը, նախատեսվում է հատկացնել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը³¹:

2020 թվականի պետական բյուջեում ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը նվազել է 2018 թվականի փաստացի ցուցանիշի համեմատ 5,3 տոկոսային կետով, ինչպես նաև 2019 թվականի համեմատ՝ 3,7 տոկոսային կետով՝ կազմելով ՀՀ պետական բյուջեի ծախսերի 84,5%-ը:

Համաձայն պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման՝ 2020 թվականին նախատեսվող ընդհանուր ծախսերից ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում սոցիալական պաշտպանության ծառայություններին (նախատեսվող ծախսերի 26,5%): Թեև այս ծառայություններին ուղղված ծախսերը 2019 թվականի համեմատ կավելանան շուրջ 38 մլրդ ՀՀ դրամով, դրա տեսակարար կշիռը բյուջեի ծախսերում նվազում է շուրջ 1,4 տոկոսային կետով: Ընդ որում, այս ծառայությունների տեսակարար կշիռը բյուջեի ծախսային կառուցվածքում նվազել է նաև 2019 թվականին՝ 2018 թվականի համեմատ 0,9 տոկոսային կետով: Երկրորդ խոշոր ծախսային ուղղությունը

³⁰ ՀՀ 2020 թվականի պետական բյուջե, հավելված 1.3

³¹ Կապիտալ ծախսերին նախորդ տարիներին հատկացված և 2020 թվականին նախատեսվող գումարների համեմատությունը ներկայացված է ստորև:

ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ծախսերն են³²՝ 2020թ. պետական բյուջեի 19,5%-ը: Ինչպես և մյուս ծախսերի դեպքում, այս ծառայություններին ուղղվող ծախսերը աճել են՝ 2017 թվականի 275 մլրդ դրամից հասնելով 362 մլրդ դրամի 2020 թվականին: 2019 թվականի համեմատ 2020 թվականին զգալի աճ են արձանագրել տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը՝ ավելի քան 80 մլրդ դրամ՝ կազմելով պետական բյուջեի ծախսերի տեսակարար կշռի 10,5%-ը (մոտ 4 տոկոսային կետով ավելի, քան 2019 թվականին): Ընդ որում, 2019 թվականին այս ծառայություններին հատկացվել է ավելի քիչ գումար, քան 2018 կամ 2017 թվականներին:

Աղյուսակ 3. Ծառայությունների տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում, ըստ գործառնական դասակարգման (%)

	2017 (փաստացի)	2018 (փաստացի)	2019 (փաստացի)	2020
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	18.3%	19.2%	19.6%	19.5%
Պաշտպանություն	19.6%	16.5%	19.4%	16.6%
Հասարակական կարգ, անվտանգություն	8.1%	8.5%	8.8%	8.2%
Տնտեսական հարաբերություններ	8.6%	7.8%	6.9%	10.5%
Կրթություն	8.3%	8.4%	7.9%	8.7%
Սոցիալական պաշտպանություն	27.2%	28.8%	27.9%	26.5%
Այլ	10.0%	10.8%	9.5%	10.0%
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0%	100.0%	100.0%	100.0%

Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջեի կազմարման տարեկան հաշվետվություններ:

Տնտեսական ծառայությունների մեջ են մտնում գյուղատնտեսությանը, արտաքին առևտրի և ներդրումների խթանմանը, ՓԲՁ զարգացմանն ուղղվող ծրագրերի իրականացման համար նախատեսված ծախսերը, ինչպես նաև բույսերի պաշտպանության լաբորատոր փորձաքննությունների, գյուղական ենթակառուցվածքների զարգացման և նմանատիպ ծառայությունների ձեռքբերմանն ուղղված ծախսերը: Բյուջեի կատարման ուսումնասիրությունների հիման վրա կարող ենք փաստել, որ 2019 թվականին այս ծառայություններից մոտ 60 մլն դրամ քիչ գումար է հատկացվել ՓՄՁ-ի սուբյեկտների աջակցության ծրագրերի համակարգման և կառավարման համար, մոտ 200 մլն դրամ չի հատկացվել արտահանման խրախուսմանն ուղղված միջոցառումների իրականացման համար, ևս 15 մլն դրամ չի

³² Այս ծախսերի մեջ են մտնում օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարմանն ուղղված ծախսերը, պետական պարտքի կառավարմանն ուղղվող ծախսերը, հարկային և մաքսային ծառայություններին առնչվող ծախսերը և այլն:

հատկացվել զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման միջոցառման իրականացման համար (ի դեպ, 2019թ. զբոսաշրջության գծով նախատեսված ծախսերից քիչ է ծախսվել շուրջ 150 մլն դրամ): 2019 թվականի նախատեսված գումարներից ավելի քան չորս միլիարդ դրամ գումար չի օգտագործվել գյուղատնտեսության ոլորտում մի շարք ծրագրերի իրականացման համար:

2020թ. ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների շուրջ 46%-ն ուղղվելու է կառավարության պետական պարտքի սպասարկմանը, որի կշիռը ընդհանուր հանրային ծառայությունների մեջ 2019 թվականի համեմատ նվազել է 3,5%-ով: Սա պայմանավորված է այս ծառայություններին ուղղված ծախսերի աճով:

2.3.1. Մարդկային կապիտալի ֆինանսավորմանն ուղղված ծախսեր

Համաձայն ՀՀ կառավարության ծրագրի՝ առաջիկա տարիներին ծախսային քաղաքականությունն ուղղվելու է մարդկային և ֆիզիկական կապիտալի կուտակմանը, զարգացմանը և իրացմանը: Այս առումով նախատեսվում է հատուկ ուշադրություն դարձնել առողջապահության, կրթության և գիտության ոլորտներին՝ ապահովելով այս ոլորտների ֆինանսավորման աճ: Մասնավորապես, գործող քաղաքական ուժն իր առջև խնդիր է դրել առաջիկա երեք տարում կայունացնել առողջապահության ծախսերը ՀՆԱ-ի 2 տոկոսի սահմաններում:

Աղյուսակ 4. 2017-2020 թվականների պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշները՝ կրթության, գիտության և առողջապահության ոլորտներում (մլն դրամ)

Ոլորտը	2017		2018		2019		2020
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան
Գիտություն	14.675,7	14.541,5	14.513,5	14.210,9	19.232,0	17.106,0	17.917,1
Կրթություն	123.607,6	123.163,3	123.394,8	120.475,3	139.488,4	129.336,3	158.932,5
Առողջապահություն	83.876,5	81.642,8	81.433,3	78.085,7	103.904,1	99.283,1	113.734,3

Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններ:

2018 թվականը կարելի է բնութագրել ոչ միայն տեղ գտած իշխանափոխությամբ, այլև ՀՀ պետական բյուջեի ծախսերի փաստացի կատարման անկմամբ: Մարդկային կապիտալի զարգացման վերոհիշյալ երեք ոլորտներում փաստացի կատարված ծախսերն ավելի քիչ էին, քան 2017 թվականին: 2019 թվականին, սակայն, նկատվել է նշված բոլոր երեք ոլորտներում կատարված փաստացի ծախսերի աճ՝ 2018 և 2017 թվականների ցուցանիշների համեմատ: Թե ինչպիսին կլինի 2020 թվականը, դժվար է կանխատեսել, սակայն ակնհայտ է, որ **2020 թվականի պետական բյուջեով ավելի քիչ գումար է նախատեսված գիտության ոլորտի ծախսերի համար**, քան 2019 թվականին էր: Իսկ քանի որ տարեվերջին փաստացի ծախսերն ավելի քիչ են լինում, քան

պլանավորվածն է, կարելի է ենթադրել, որ գիտության ոլորտում 2020 թվականի ավարտին կնկատենք կա՛մ ծախսերի նվազեցում, կա՛մ էլ 2019 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ քիչ աճ:

Չնայած ծախսերի գումարային ավելացմանը, պատկերն այլ է, երբ ուսումնասիրում ենք այս ոլորտներին հատկացվող գումարի տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում:

2019 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի տվյալների համաձայն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ծախսային կառուցվածքում մարդկային կապիտալին ուղղված ծախսերը կշռով գրեթե մնացել են նույնը (2019թ.՝ 15,1%, 2018թ.՝ 14,7%): 2019 թվականի այս ցուցանիշը էականորեն չի տարբերվում 2017 թվականի ցուցանիշից՝ ընդամենը 0,5 տոկոսային կետով: Դա հիմնականում պայմանավորված է առողջապահության ոլորտում պետական բյուջեից հատկացված ծախսերի 0,7% աճով: Գիտության ոլորտում այս աճն աննշան է «հեղափոխական» համարելու համար՝ 0.1%, իսկ կրթության ոլորտում հատկացվող գումարի տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում 2019 թվականին 2017 թվականի համեմատ նվազել է 0,3%-ով:

Աղյուսակ 5. 2017-2020 թվականներին կրթության, գիտության և առողջապահության ոլորտներում ծրագրային և փաստացի ցուցանիշների տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում (%)

Ոլորտը	2017		2018		2019		2020
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան
Գիտություն	0,9	1,0	1,0	1,0	1,1	1,1	1,0
Կրթություն	7,9	8,2	8,1	8,3	7,9	7,9	8,6
Առողջապահություն	5,4	5,4	5,3	5,4	5,9	6,1	6,1

Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջեի կադարման տարեկան հաշվետվություններ:

Թեև 2020 թվականի պետական բյուջեով նշված ոլորտներին հատկացվելիք գումարների տեսակարար կշիռը բյուջեի ծախսերի մեջ կազմում է 15,7%, մոտ 0,7%-ով ավելի է, քան 2019 թվականին փաստացի կատարված ծախսերը: Գիտության ոլորտում հատկացվելիք գումարների տեսակարար կշիռը բյուջեի ծախսերի մեջ կլինի համեմատաբար ավելի քիչ (0,1%-ով), քան 2019 թվականին էր: 2019 թվականի համեմատ չի փոխվել նաև առողջապահության ոլորտին հատկացվելիք գումարների տեսակարար կշիռը՝ 6,1%: Իսկ կրթության ոլորտին հատկացվելիք գումարների տեսակարար կշիռը էականորեն չի տարբերվում 2017 կամ 2018 թվականներին հատկացված գումարների տեսակարար կշռից (2017-ին՝ 8,2%, 2018-ին՝ 8,3%, 2020-ին՝ 8,6%):

Իշխող քաղաքական ուժը՝ հանձին ՀՀ վարչապետի, իշխանության ղեկին է 2018 թվականից: Այսինքն՝ նոր ուժը հնարավորություն է ունեցել ոչ միայն մշակել 2019 և 2020 թվականների բյուջեները, այլև իրականացնել մասամբ 2018 թվականի և ամբողջությամբ 2019 թվականի բյուջեները: Ուստի, կարելի է արձանագրել, որ իշխող քաղաքական ուժն արդեն երկու տարի կազմում է պետական բյուջեն, և պարտավոր էր կատարել իր նախընտրական ծրագրով տրված խոստումներից գոնե մեկը՝ առողջապահության ծախսերը առաջիկա երեք տարիների ընթացքում կայունացնել ՀՆԱ-ի 2%-ի սահմաններում: Հստակ չէ, թե ինչ նկատի ունի կառավարությունը «2%-ի սահման» ասելով, սակայն կարելի է համարել, որ այդ սահմանը պետք է որ լինի 2% +/- 0,1-0,2 %:

2019 թվականին առողջապահության ոլորտին նախատեսված էր հատկացնել գրեթե 104 մլրդ ՀՀ դրամ կամ 2018 թվականի ՀՆԱ-ի 1,7%-ը: 2019 փաստացի տվյալներով առողջապահության ոլորտին հատկացվել է մոտ 99 մլրդ դրամ: Հաշվի առնելով 2019 թվականի տարեկան ՀՆԱ-ի ցուցանիշները՝ առողջապահություն/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է մոտ 1,5%: Այս ցուցանիշը, այնուամենայնիվ, 2%-ի սահմաններում չէ:

2020 թվականի առողջապահության ոլորտի համար նախատեսված է մոտ 113 մլրդ ՀՀ դրամ կամ 2019 թվականի ՀՆԱ-ի մոտ 1,7%-ը: Այսինքն՝ այսօր իսկ կարելի է փաստել, որ իշխող քաղաքական ուժը չի կատարել այս մասով իր նախընտրական խոստումը: Նման հաշվարկներով շարժվելու դեպքում, այն չի ապահովի նաև այդ խոստման երկրորդ մասի իրականացումը՝ հինգ տարիներին առողջապահության ծախսերը կայունացնել ՀՆԱ-ի 3%-ի սահմաններում: Խոստացված ցուցանիշին հասնելու համար, առողջապահության ոլորտին հատկացվելիք գումարը 2020 թվականին պետք է գերազանցի պլանավորված գումարը մոտ 25 մլրդ դրամով: Իսկ ՀՆԱ-ի 6% աճի պայմաններում, 2021 թվականին առողջապահության ոլորտին հատկացվելիք գումարը պետք է գերազանցի 2020 թվականին նախատեսված գումարը մոտ 30%-ով, իսկ 2022-ին՝ 2021 թվականին հատկացվելիք գումարը՝ մոտ 80%-ով:

Ընդհանուր առմամբ՝ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված է 178,8 մլրդ ՀՀ դրամ հատկացնել աշխատանքի վարձատրության ծախսերի համար, ինչը 3,6%-ով ավելի է, քան 2019 թվականին հատկացված գումարը: Ընդ որում, 2019 թվականին այդ գծով կատարված ծախսերը գերազանցել են 2018 թվականի ցուցանիշը մոտ 13%-ով: Ավելին, համաձայն 2020 թվականի պետական բյուջեի, 2020 թվականի բյուջեում պարգևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար նախատեսված գումարը (27.982.385,4 հազար դրամ) հինգ անգամ ավելի է 2018 թվականին այդ նպատակով հատկացված գումարից:

Հոդվածի անվանումը	2018թ. փաստացի կատարողական (հազար դրամ)	2019թ. փաստացի կատարողական (հազար դրամ)	2020թ. հաստատված (հազար դրամ)	2020թ. բյուջեի %-ը	
				2018թ. փաստացի կատարողականի նկատմամբ	2019թ. փաստացի կատարողականի նկատմամբ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	152,755,093.81	172,578,614.92	178,777,641.00	117.0	103.6
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	140,475,469.89	137,774,782.29	143,991,580.20	102.5	104.5
- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	5,397,241.77	26,608,264.44	27,982,385.40	518.5	105.2
-Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	3,861,859.49	3,919,621.94	4,116,065.20	106.6	105.0
- Հարկային և մաքսային մարմինների աշխատողների պարգևատրում	2,898,250.00	4,166,486.60	2,548,421.50	87.9	61.2
- Այլ վարձատրություններ	122,272.66	109,459.65	139,188.70	113.8	127.2

Իհարկե, անչափ կարևոր է պետական մարմիններում աշխատող անձանց ֆինանսական ապահովվածությունը, ինչը դրականորեն կարող է ազդել նրանց պարտականությունների իրականացման վրա: Սակայն 2018-2019 թվականներին մի շարք ոլորտներում պետական մարմինների կատարած աշխատանքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միայն ղեկավար աշխատողների աշխատավարձերը կամ պարգևատրումները էապես բարձրացնելով հնարավոր չի եղել հասնել պետական համակարգի արդյունավետ կառավարման:

Այսպիսով, թեև ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է մարդկային կապիտալին ուղղված ֆինանսավորման աճ, 2017 թվականի համեմատ **գիտության, կրթության և առողջապահության ոլորտներին** ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը էական փոփոխության չի ենթարկվում: Ավելին, ՀՀ կառավարությունն արդեն իսկ չի ապահովել իշխող քաղաքական ուժի նախընտրական խոստումներից գոնե մեկի իրականացումը:

2.3.2. Տարածքային կառավարմանն ու ենթակառուցվածքներին ուղղված ծախսեր

Մարդկային կապիտալին ուղղվող ծախսերի հետ մեկտեղ կառավարությունը կարևորում է նաև ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերը: Թեև կառավարության ծրագիրը չի մանրամասնում, թե ինչ նկատի ունեն կառավարությունը ենթակառուցվածք ասելով, սակայն համընդհանուր ընկալմամբ, ինչպես նաև նախորդ կառավարությունների կողմից ներկայացված հաշվետվությունների գնահատմամբ կարծում ենք՝ դրանք ջրամատակարարման, ճանապարհաշինության, օդային հաղորդակցության, հեռահաղորդակցության ոլորտներն են և էներգետիկ համակարգը:

2019 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի տվյալների համաձայն՝ ենթակառուցվածքներին (ոչ ֆինանսական ակտիվներին) ուղղվել է մոտ 193 մլրդ ՀՀ դրամ գումար՝ մոտ 70մլրդ ՀՀ դրամով քիչ, քան նախատեսված էր բյուջեով:

Աղյուսակ 6. 2017-2020 թվականների պետական բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (մլն ՀՀ դրամ)

2017		2018		2019		2020
Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան
266,975.81	238,385.89	205,398.69	151,988.09	262,421.80	193,017.03	287,740.96

Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջեի կադարման տարեկան հաշվետվություններ:

Չնայած 2019 թվականին ենթակառուցվածքներին ուղղված գումարները գերազանցել են 2018 թվականին հատկացված գումարը մոտ 26%-ով, սակայն դեռ զիջում են 2017 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով կատարված ծախսերին: Թե ինչպես կլինի 2020 թվականին, հնարավոր կլինի գնահատել տարեվեջին, սակայն այսօր իսկ կարելի է փաստել, որ 2020 թվականի բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով նախատեսված ծախսերը աճել են 2019 թվականի նախատեսված ծախսերի համեմատ մոտ 25 մլրդ ՀՀ դրամով:

2020 թվականի պետական բյուջեով նախատեսվում է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշռի աճ մոտ 0,6%-ով՝ 2019 թվականի հաստատված ցուցանիշի համեմատ կամ մոտ 4%-ով՝ 2019 թվականին կատարված փաստացի ծախսերի նկատմամբ: Հարկ է նշել, սակայն, որ նույնիսկ այս ցուցանիշով 2020 թվականի բյուջեն զիջում է 2017 թվականի բյուջեին: Այսպես, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռը կազմել է 2017 թվականի բյուջեի 17,1%-ը՝ 2,4%-ով ավելի, քան նախատեսված է 2020 թվականին: Ընդ որում, 2017 թվականին այս ուղղությամբ փաստացի կատարված ծախսերի տեսակարար կշիռը նույնպես գերազանցում է 2020 թվականի պլանավորված ցուցանիշը:

Աղյուսակ 7. 2017-2020 թվականների պետական բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների ծախսերի ծրագրային և փաստացի ցուցանիշների տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում (%)

2017		2018		2019		2020
Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան
17.1	15.8	13.4	10.5	14.9	11.9	15.5

Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջեի կադարման տարեկան հաշվետվություններ:

Այսպիսով, ակնհայտ է, որ 2018 և 2019 թվականներին նվազել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերում: Ու թեև 2020 թվականին նկատվում է պլանավորված ցուցանիշի աճ, այն

դեռևս չի գերազանցում 2017 թվականի ցուցանիշը: Գումարային առումով 2020 թվականին, իհարկե, նկատելի է ոչ ֆինանսական ակտիվներին ուղղվող ծախսերի աճը 2018 և 2019 թվականների համեմատ, սակայն այն մնում է 2017 թվականի պետական բյուջեի ծախսերի շրջանակում:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում 2020 թվականին շուրջ կրկնակի անգամ աճել է կառավարման ապարատի տեխնիկական հագեցածությանն ուղղվող ծախսերը՝ 2019 թվականին փաստացի ավելի քան 7 մլրդ դրամի փոխարեն նախատեսելով 15.3 մլրդ դրամ 2020-ին: Դեռևս անհասկանալի է, թե ինչին է ուղղված լինելու այս գումարները, եթե, ըստ կառավարության, օպտիմալացվել են պետական կառույցները: Ստացվում է, որ մի կողմից կառավարությունը կրճատում է պետական ծառայողների թվաքանակը, մյուս կողմից կրկնակի ավելացնում տեխնիկական հագեցվածությանն ուղղվող գումարները:

2019 թվականի համեմատ 2020-ին զգալիորեն աճել է նաև ոռոգմանն ուղղվող ծախսերը: Սակայն այս համեմատությունը զգալի է 2019 կամ 2018 թվականների համեմատ, երբ ոռոգմանն ուղղվող ծախսերը զգալիորեն նվազել էին՝ 2017թ. 17 մլրդ դրամից 2018 թվականին հասնելով 7 մլրդ դրամի և 2019 թվականին՝ մոտ 5 մլրդ դրամի: Զգալիորեն չի փոխվել նաև ոռոգմանը հատկացվող գումարների տեսակարար կշիռը՝ փաստացի 7,3%-ից (2017թ.) հասնելով ընդամենը պլանավորված 8,5%-ի (2020թ.):

2017 թվականի համեմատ 2020 թվականին գրեթե կրկնապատկվել է ճանապարհային տրանսպորտի ոլորտին հատկացվելիք գումարները (2017-ին՝ 45,990,059.32 ՀՀ դրամ, 2020-ին՝ 87,200,548.60): 2020 թվականին նախատեսված գումարներից մոտ 21.6 մլրդ-ը նախատեսվում է ուղղել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը: Ընդ որում այս ցուցանիշը գերազանցում է 2017 թվականին պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման նպատակով հատկացված գումարին մոտ հինգ անգամ:

Ենթակառուցվածքների ոլորտին ՀՀ կառավարության կողմից հատկացված կամ պլանավորված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը 2017-2020 թվականների կտրվածքով ներկայացված է Աղյուսակ 8-ում:

2020 թվականին մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման համար նախատեսվել է 51.343,7 մլն ՀՀ դրամ գումարը, ինչը գերազանցում է 2018 թվականին այդ նպատակով հատկացված գումարը ավելի քան երկու անգամ: Ի դեպ, համաձայն 2020 թվականի պետական բյուջեի ուղերձի, 2020 թվականին 155 մեքենայով նվազեցվել է ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը՝ հասցնելով այն 927 ավտոմեքենայի:

Աղյուսակ 8. 2017-2020 թվականներին ենթակառուցվածքներին ուղղված ՀՀ պետական բյուջեի ծրագրային և փաստացի ծախսերը

ԲԱԺԻՆ	ԽՈՒՆԲ	ԴԱՍ	ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	2017		2018		2019		2020
				Ճշտված պլան	Փաստացի	Ճշտված պլան	Փաստացի	Ճշտված պլան	Փաստացի	Հաստատված
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ				266,975,805.70	238,385,893.32	205,398,687.09	151,988,091.59	262,445,026.46	193,016,646.11	287,740,960.20
այդ թվում՝										
##			ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԾԱԽՍԵՐ	9,772,465.80	7,572,927.20	6,595,966.10	4,912,534.56	14,013,159.90	7,768,516.74	15,262,728.70
02			ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	120,247,311.00	119,893,062.02	66,979,457.00	59,778,633.74	127,553,014.80	114,196,359.64	93,948,327.40
03			ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ	4,448,154.50	4,026,390.13	3,926,227.89	2,661,627.56	6,211,147.36	4,680,500.85	2,084,701.40
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	93,703,123.00	79,558,759.57	88,882,670.70	63,572,326.04	77,016,721.40	48,561,268.50	130,608,583.90
			այդ թվում՝							
	0401		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ					15,000.00	-	
	0402		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	21,285,925.90	20,874,999.02	13,938,101.50	9,085,278.97	9,393,165.50	5,417,047.51	27,868,842.30
			այդ թվում՝							
		040201	Գյուղատնտեսություն	3,511,759.90	3,425,669.29	2,770,105.70	1,866,503.35	2,198,674.30	563,245.39	2,842,826.40
		040202	Անտառային տնտեսություն					119,677.20	5,900.00	539,514.80
		040204	Ոռոգում	17,774,166.00	17,449,329.73	11,167,995.80	7,218,775.62	7,074,814.00	4,847,902.12	24,486,501.10

ԲԱԺԻՆ	ԽՈՒՄԲ	ԴԱՍ	ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	2017		2018		2019		2020
				Ճշտված պլան	Փաստացի	Ճշտված պլան	Փաստացի	Ճշտված պլան	Փաստացի	Հաստատված
	0403		Վառելիք և էներգետիկա	10,941,205.90	8,582,148.85	20,806,650.40	14,416,928.88	12,106,335.70	4,131,771.83	3,477,922.60
			այդ թվում՝							
		040303	Միջուկային վառելիք					3,000.00	-	
		040304	Վառելիքի այլ տեսակներ	3,442,841.90	2,981,371.20	6,367,479.10	2,267,469.12	5,360,997.80	1,367,118.28	3,477,922.60
		040305	Էլեկտրաէներգիա	7,498,364.00	5,600,777.65	14,439,171.30	12,149,459.76	6,742,337.90	2,764,653.55	
	0405		Տրանսպորտ	56,765,763.50	46,060,014.24	48,476,381.00	34,325,201.06	49,984,135.60	34,771,514.86	88,653,771.50
			այդ թվում՝							
		040501	Ճանապարհային տրանսպորտ	54,400,213.30	45,990,059.32	45,356,734.40	34,037,157.62	47,634,787.00	34,575,002.88	87,200,548.60
		040505	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	2,365,550.20	69,954.92	3,119,646.60	288,043.44	2,349,348.60	196,511.98	1,453,222.90
	0409		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	4,710,227.70	4,041,597.46	5,661,537.80	5,744,917.13	5,518,084.60	4,240,934.30	10,608,047.50
05			ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	6,938,192.90	1,707,522.94	3,366,059.80	1,837,989.98	5,640,612.90	1,789,532.88	7,164,419.80
			այդ թվում՝							
	0501		Աղբահանում	4,150,914.20	500.00	1,369,100.70	-	3,082,562.40	-	6,494,882.10
	0504		Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	1,911,813.50	1,701,350.28	1,600,000.00	1,599,999.98	1,786,538.40	1,786,538.35	
	0506		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	875,465.20	5,672.66	396,959.10	237,990.00	771,512.10	2,994.53	669,537.70

ԲԱԺԻՆ	ԽՈՒՐԲ	ԴԱՍ	ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	2017		2018		2019		2020
				Ճշտված պլան	Փաստացի	Ճշտված պլան	Փաստացի	Ճշտված պլան	Փաստացի	Հաստատված
06			ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	12,003,407.40	7,142,765.26	18,513,336.40	5,995,069.16	13,626,958.60	5,494,735.66	15,429,820.40
			այդ թվում՝							
	0601		Բնակարանային շինարարություն	3,666,123.30	3,617,868.84	8,194,611.80	4,391,347.64	6,780,694.70	4,688,325.32	522,000.00
	0603		Ջրամատակարարում	7,584,001.50	3,524,896.42	8,451,326.50	1,603,721.52	5,625,349.50	228,821.76	14,309,946.70
	0604		Փողոցների լուսավորում	753,282.60	-	1,867,398.10	-	1,220,914.40	577,588.58	597,873.70
07			ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	3,527,496.30	3,423,458.80	2,921,506.30	2,272,914.83	3,992,252.00	1,869,304.82	1,023,119.40
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	1,038,907.20	983,577.36	673,312.70	549,310.73	555,368.90	182,258.30	431,131.90
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	4,822,031.60	4,784,883.99	7,176,614.10	5,529,601.10	12,101,078.70	7,926,558.60	17,971,825.70
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2,177,305.50	1,580,503.15	1,592,196.10	739,561.55	1,734,711.90	547,610.12	3,816,301.60
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	8,297,410.50	7,712,042.90	4,771,340.00	4,138,522.34			

Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջեի կադարման տարեկան հաշվետվություններ:

Թեև կառավարությունը 2018 թվականի համեմատ 2019 և 2020 թվականներին գրանցել է ենթակառուցվածքների ոլորտին հատկացվող գումարների աճ, դրանք շատ չեն տարբերվում 2017 թվականին պետական բյուջեից հատկացված գումարներից:

Տարածքային կառավարմանն ուղղված ծախսեր. Տարածքային կառավարման ենթաբաժնում դիտարկվել են սուբսիդիաներն ու դրամաշնորհները. այս տնտեսագիտական հոդվածներում են ներառված հատկացումները համայնքներին, պետական և ոչ պետական կազմակերպություններին, ինչպես նաև ընթացիկ և կապիտալ սուբվենցիաները³³ համայնքներին:

Աղյուսակ 9. Սուբսիդիաների, դրամաշնորհների և սուբվենցիաների ծրագրային և փաստացի ցուցանիշները 2017-2020 թվականների պետական բյուջեներում (հազ. դրամ)

	2017		2018		2019		2020
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան
Սուբսիդիա	113,668,789.0	112,823,545.9	112,384,267.2	111,225,719.5	110,753,365.1	113,375,483.5	116,352,208.6
Դրամաշնորհ	134,919,261.0	133,034,801.6	129,831,470.8	126,318,043.7	120,669,317.3	149,999,743.4	165,355,366.7
Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	9,003,385.50	9,001,058.61	8,752,066.3	8,677,571.0	8,962,564.2	9,268,940.8	8,982,969.7
Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	232,470.6	215,355.0	3,484,615.9	2,546,028.7	735,887.9	6,532,408.8	10,600,000.0

Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջեի կադարման տարեկան հաշվետվություններ, ՏՀՀԱԿ հաշվարկներ:

2017 թվականի համեմատ 2019 և 2020 թվականներին աճել են պետական հատվածին և համայնքներին տրամադրվող սուբվենցիաները: Այսպես, եթե 2017 թվականին այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել էր մոտ 9,2 մլրդ ՀՀ դրամ, ապա 2019 թվականին այդ հատկացումները կազմել են ավելի քան 15,8 մլրդ դրամ, իսկ 2020 թվականին նախատեսվում է մոտ 19 մլրդ դրամից ավելի սուբվենցիաների հատկացում: 2020 թվականն առանձնանում է նրանով, որ ՀՀ

³³ Ըստ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-N որոշման, սուբվենցիաները համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներն են:

կառավարությունը նախատեսում է շուրջ 10 մլրդ դրամի սուբվենցիա տրամադրել ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար:

Պատկերը գրեթե նույնն է նաև սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման առումով՝ մի փոքր բացառությամբ, որ 2018 թվականին, 2017 թվականի համեմատ, նվազել են դրանց հատկացումները:

Կառավարությունն իր ծրագրում կարևորում է պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրումը՝ ընդգծելով դրանց ավելի «ներառական ու մասնակցային» լինելու անհրաժեշտությունը: Իհարկե, կառավարությունը չի տալիս «ներառական և մասնակցային» բառերի բացատրությունը: Սակայն փորձագիտական դաշտում դա իրենից ներկայացնում է ծախսերի ուղղությունների որոշման վերաբերյալ հասարակության, հատկապես համայնքների, լայն խավերի մասնակցությունը, ինչպես նաև դրանց արդարացի բաշխումը հասարակությունում և բոլորի համար հնարավորությունների ստեղծումը: Առցանց հասանելի տեղեկատվության ուսումնասիրությունը, սակայն, այդպես էլ չբացահայտեց համայնքներում սուբվենցիոն հայտերի քննարկման միջոցառումների անցկացում: Կամ, եթե անցկացվել են այդպիսի քննարկումներ, ապա դրանց անցկացման վերաբերյալ հայտարարությունները հասանելի չեն եղել հանրությանը: Այսինքն՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով (նույնը վերաբերում է նաև 2019 թվականի պետական բյուջեին) նախատեսված սուբվենցիոն ծրագրերը առնվազն մասնակցային չեն:

2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբվենցիաների զգալի մասն ուղղվելու է համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը: Գումարների մյուս մասն ուղղվելու է համայնքներում պետական կառավարման, բնապահպանական, մշակութային, կրթական ծրագրերի իրականացման համար: Դրանք բովանդակային առումով գրեթե նույնն են ինչ 2017 կամ 2018 թվականներին հատկացված սուբվենցիաները: Այսինքն՝ էականորեն չեն տարբերվում 2017 կամ 2018 թվականների ծրագրերից և չեն արտահայտվում նորարարությամբ:

Թեև գումարային առումով 2020 թվականի պետական բյուջեում նկատվում է նախատեսվող սուբսիդիաների աճ, դրանց տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում նվազել է 2018 և 2017 թվականների նկատմամբ:

Ի տարբերություն սուբսիդիաների՝ ծրագրավորված դրամաշնորհները ծախսերի կշռում 2020 թվականին տեսակարար կշռով գրեթե անփոփոխ են մնում 2017 թվականի համեմատ:

Աղյուսակ 10. Սուբսիդիաներին, դրամաշնորհներին և սուբվենցիաներին հատկացվող գումարների տեսակարար կշիռը 2017-2020 թվականների պետական բյուջեներում (%)

	2017		2018		2019		2020
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան
Սուբսիդիա	7.28	7.50	7.36	7.69	6.28	6.96	6.27
Դրամաշնորհ	8.64	8.84	8.50	8.73	6.84	9.21	8.91
Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	0.58	0.60	0.57	0.60	0.51	0.57	0.48
Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	0.01	0.01	0.23	0.18	0.04	0.40	0.57

Աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, ՀՀ պետական բյուջեի կադարման տարեկան հաշվետվություններ, ՏՀՀԱԿ հաշվարկներ:

Զգալիորեն աճել է սուբվենցիաների տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում, 2020 թվականին հասնելով ծախսերի 1,05%-ի՝ 2017 թվականի 0,61% ցուցանիշի համեմատ: Ընդ որում սուբվենցիաների զգալի աճը պայմանավորված է կապիտալ սուբվենցիաներին հատկացվող գումարների աճով, այն դեպքում, երբ ընթացիկ սուբվենցիաների տեսակարար կշիռը նվազել է:

2.4. Պետական պարտքի կառավարումը

Ենթակառուցվածքային ներդրումները, որոնք հիմնականում իրականացվում են արտաքին վարկերի միջոցով, տնտեսության վրա ունենում են ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ դրական ազդեցություն:

Կարճաժամկետ հատվածում արտաքին վարկերի միջոցով կատարված ներդրումները խթանում են ամբողջական պահանջարկը: Տնտեսական աճի վրա ազդեցության չափը մեծապես կախված է տնտեսական իրավիճակից և ստեղծվող ենթակառուցվածքային ակտիվների տեսակից: Տնտեսագիտական գրականությունում շեշտվում է, որ առավելագույն կարճաժամկետ արդյունքներ կարճաժամկետում այն դեպքում, երբ արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու ֆինանսական միջոցները ծախսվեն ճգնաժամային իրավիճակում և ուղղվեն հիմնական ակտիվների (ճանապարհներ, կամուրջներ, ջրամբարներ և այլն) ստեղծմանը նպաստող ծրագրերի ֆինանսավորմանը:

Ենթակառուցվածքային ներդրումների երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական աճի վրա դրսևորվում է արտադրողականության բարձրացմամբ: Ենթակառուցվածքների բարելավումը նվազեցնում է ընկերությունների հաստատուն ծախսերը (ինչպես, օրինակ՝ տրանսպորտային ծախսերը, որոնք բիզնեսի տեղի ընտրության առանցքային գործոններից են)՝ խթանելով մասնավոր ներդրումների աճը: Որակյալ ենթակառուցվածքներն ուղղակիորեն ազդում են տնային տնտեսությունների կյանքի որակի վրա՝ հասանելի դարձնելով տարբեր ծառայությունները (խմելու ջուր, կապ և այլն):

Արդյունքում ենթակառուցվածքային ներդրումները բարձրացնում են ամբողջ տնտեսության արտադրողականությունը՝ թույլ տալով ռեսուրսների միևնույն քանակով արտադրել ավելի շատ ապրանքներ և ծառայություններ, ինչը խթանում է երկարաժամկետ տնտեսական աճը:

2020 թվականի հունվարի մեկի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7.324,2 մլն ԱՄՆ դոլար կամ 5,8%-ով ավելի, քան 2018 թվականին (6.922,5 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում, 2018 թվականին պետական պարտքը 2017 թվականի համեմատ աճել է ընդամենը 2,2%-ով:


Աղյուսակ 11. ՀՀ պետական պարտքի ցուցանիշները 2017-2019 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)

	2017	2018	2019
Պետական պարտք, այդ թվում՝	6.774,6	6.922,5	7.324,2
<i>Արտաքին պարտք, այդ թվում՝</i>	<i>5.494,9</i>	<i>5.536,4</i>	<i>5.789,7</i>
ՀՀ կառավարության պարտք	4.893,4	4.986,3	5.298,1
ՀՀ կենտրոնական բանկի պարտք	601,5	550,1	489,3
<i>Ներքին պարտք, այդ թվում՝</i>	<i>1.279,7</i>	<i>1.386,1</i>	<i>1.536,7</i>
ՀՀ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսեր	1.115,6	1.208,3	1.412,8
ՀՀ ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթային պետական պարտատոմսեր	155,1	168,9	124,0
Վարկեր և փոխառություններ	-	-	-
Ներքին երաշխիքներ	9,0	9,0	-

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2019թ. պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություն:

2019 թվականին պետական պարտքի 79%-ը կազմել է արտաքին պարտքը, ինչը երկու տոկոսային կետով քիչ է, քանի 2017 թվականի ցուցանիշը: Դրա փոխարեն մոտ երկու տոկոսային կետով աճել է ներքին պարտքը՝ կազմելով պետական պարտքի 21%-ը:

Գծապատկեր 4. Պետական պարտքը 2017-2019թթ. (մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ 2019թ. պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություն:


Թեև կառուցվածքային առումով վերջին երկու տարիներին նկատվում է ներքին պարտքի տեսակարար կշռի աճ, գումարային առումով շարունակվում է ներքին և արտաքին պետական պարտքի աճը: Այսպես, 2019 թվականին ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 մլրդ 537 մլն ԱՄՆ դոլար, ինչը 150 մլն ԱՄՆ դոլարով կամ 10,9%-ով ավելի է 2018 թվականի ցուցանիշից: Ներքին պարտքի աճը պայմանավորված է ՀՀ ռեզիդենտների կողմից պետական պարտատոմսերի ձեռքբերման աճով: Այսպես, եթե 2017 թվականին ՀՀ ռեզիդենտների կողմից ձեռք էր բերվել մոտ 1,1 մլրդ ԱՄՆ դոլարի պարտատոմս, ապա 2019 թվականին այդ ցուցանիշը հասել էր 1,4 մլրդ ԱՄՆ դոլարի:

Ներքին պարտքի աճի համեմատ համեմատաբար դանդաղ է աճել արտաքին պարտքը՝ 2018 թվականի համեմատ 251,1 մլն ԱՄՆ դոլարով կամ 4,5%-ով: Արտաքին պարտքի գերակշիռ մասը կառավարության պարտքն է (91,6%), որը 2019 թվականին կազմել է 5,3 մլրդ ԱՄՆ դոլար՝ 8,3%-ով ավելի, քան 2017 թվականին:

Ընդ որում, կառավարության ընդհանուր պարտքը (ներքին և արտաքին) 2019 թվականին կազմել է 6,834.9 մլն ԱՄՆ դոլար՝ մոտ 460 մլն ԱՄՆ դոլար ավելի, քան 2018 թվականին: 2019 թվականին կառավարության պարտքի 63,1%-ը կազմել են արտաքին

վարկերը և պարտատոմսերը (երկու տոկոսային կետով քիչ, քան 2017-ին), իսկ 20,8%՝ պետական գանձապետական պարտատոմսերը (ի տարբերություն 2017-ի՝ գանձապետական պարտատոմսերի տեսակարար կշիռն աճել է 2,4%-ով): Երրորդ խոշոր պարտքային ցուցանիշը արտարժույթային պետական պարտատոմսերն են՝ 16,1% տեսակարար կշռով:


Գծապատկեր 5. Կառավարության պարտքի կառուցվածքն ըստ գործիքակազմի (%)



Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

2017-2019 թվականներին շարունակաբար աճում է ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՀՀ դրամով ներգրավված պարտքը: ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքում 2019-ին ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռը կազմել է 20,8%, ինչը գերազանցում է 2017-ի ցուցանիշը 2,4 տոկոսային կետով: Պարտքի արժույթային կառուցվածքում ԱՄՆ դոլարով ներգրավված պարտքի կշիռը 2019 թվականին կազմել է 23,9% կամ 1,9 տոկոսային կետով ավելի, քան 2017-ին: 2000 թվականից ի վեր նվազում է ՓՀԻ-ով ներգրավված պարտքի կշիռը՝ 2018-ին կազմելով 21%:

Գծապատկեր 6. ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքը



Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում աստիճանաբար նվազում է ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը՝ 2013 թվականի 90,7%-ից հասնելով 83,8%-ի 2019 թվականին: Ընդ որում, եթե 2017 թվականին անկումը 2016-ի համեմատ կազմել է մեկ տոկոսային կետ, ապա 2018 թվականին այն կազմել է 1,5 տոկոսային կետ՝ 2017 թվականի համեմատ, իսկ 2019 թվականին 1,2 տոկոսային կետ՝ 2018 թվականի համեմատ:

2019 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարությունը թողարկեց 500 մլն դոլարի եվրապարտատոմսեր: 2020թ. սեպտեմբերին մարվող պետական արտարժույթային պարտատոմսերի վերաֆինանսավորման արդյունքում ՀՀ կառավարությանը հաջողվել է մեղմել 2020թ. պետական պարտքի մարման և առաջիկա տարիներին պետական պարտքի սպասարկման բեռը ³⁴, քանի որ սպասարկման ծախսերը նվազել են մոտավորապես 7,4 մլն դոլարով, 2020թ. մարումների ծավալը չի գերազանցի 100 մլն ԱՄՆ դոլարը (ինչը, այլ հավասար պայմաններում համեմատաբար թեթև բեռ է ՀՀ պետական բյուջեի համար), իսկ պետական պարտքի գծով առաջիկա խոշոր մարումը նախատեսվում է 2025թ. մարտին ³⁵:

Ինչպես նկատելի է վերոհիշյալ տեղեկատվությունից ՀՀ պետական պարտքը տարեցտարի աճում է: Թեև 2018 թվականին այդ աճի տեմպը մի փոքր դանդաղել էր, սակայն 2019 թվականին պետական պարտքը կրկին զգալիորեն ավելացել է:

Պետական պարտքի բեռը չափելու հիմնական մեթոդը այն ՀՆԱ-ի հետ համեմատելն է: 2017 թվականի տարեվերջին կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել էր 53.7%, ինչը Հայաստանի պատմության ամենաբարձր ցուցանիշն էր: 2018 թվականին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա

³⁴ Նոր թողարկված պարտատոմսերի եկամտաբերությունը 4,2% է, ինչը համեմատաբար ավելի ցածր է քան 2013 թվականին թողարկվածը՝ 6,25%:

³⁵ Խոսքը 2015 թվականին թողարկված 500 մլն ԱՄՆ դոլարի արտարժույթային պարտատոմսերի մասին է, որոնք պետք է մարվեն 2025 թվականին:

համեմատությամբ նվազել է 2.4 տոկոսային կետով՝ կազմելով 51.3%, իսկ 2019 թվականին ևս 1,3%-ով՝ կազմելով 50%:

ՀՀ 2020թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն³⁶ ՀՀ պետական պարտքը (ներառյալ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը) 2020 թվականի տարեվերջին կկազմի 3,636 մլրդ դրամ (7,630 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 51.2%-ը: Ըստ կանխատեսումների՝ ՀՀ կառավարության պարտքը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմի 7,177.0 մլն ԱՄՆ դոլար կամ մոտ 342 մլն ԱՄՆ դոլար ավելի, քան 2019 թվականի պարտքը: Նախատեսվում է 2020 թվականին շարունակել ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ ՀՀ պետական բյուջեի կանխատեսումների կկազմի 24,1%:

Աղյուսակ 12. ՀՀ 2020թ. պետական բյուջեի ուղերձով ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքի կանխատեսումը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Առ 31.12.2020թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ	
ներքին պարտք	875
արտաքին պարտք	2,544
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ	
արտաքին վարկեր և փոխառություններ	2,114
պետական գանձապետական պարտատոմսեր	826
արտարժույթային պետական պարտատոմսեր	476
արտաքին երաշխիքներ	4
ներքին երաշխիքներ	-
Արժույթային կառուցվածքը, մլրդ դրամ	
ՀՀ դրամով ներգրավված պարտք	826
արտարժույթով ներգրավված պարտք	2,594
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ	
լողացող տոկոսադրույքով	615
ֆիքսված տոկոսադրույքով	2,804

Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

³⁶ ՀՀ կառավարության 2020 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, [http://www.minfin.am/website/images/website/byuje%20ev%20krnaki%20harkum/3.1.2020_Uxerdz%20\(2\).docx](http://www.minfin.am/website/images/website/byuje%20ev%20krnaki%20harkum/3.1.2020_Uxerdz%20(2).docx)

2019 թվականի համեմատ, 2020 թվականին ՀՀ կառավարությունը ընդլայնում է ներքին պարտքը մոտ 140 մլրդ դրամով՝ թողարկելով պետական գանձապետական պարտատոմսեր: Համապատասխանաբար կմեծանա նաև ՀՀ դրամով ներգրավված պարտքը: Կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի էապես չի փոխվի:

Այսպիսով ակնհայտ է, որ կառավարությունը փորձում է կառավարել պետական պարտքը և ունի դրական կանխատեսումներ: Այնուամենայնիվ, դրական արդյունք գրանցելով պետական պարտքի կառավարման գործում, կառավարությունը, դեռևս չի իրականացրել պետական պարտքին առնչվող խոստումներից մեկը՝ պետական պարտքի կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրումը: Համենայնդեպս, այն հասանելի չէ առցանց: Իսկ եթե այն ներդրվել է և գործում է պետական կառավարման մարմինների համար՝ ներքին ցանցի միջոցով, ապա հարց է առաջանում, թե ինչու է կառավարությունը նման խոստում ներկայացնում հանրությանը, եթե դրա իրականացումը լինելու է գաղտնի: Իսկ եթե «էլեկտրոնային համակարգ» ասելով կառավարությունը նկատի ունի ՀՀ ֆինանսների նախարարության կայքում տեղադրված պետական պարտքի վերաբերյալ տեղեկատվությունը, ապա այն չի ապահովում «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրով տրված խոստման ամբողջական իրականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ամփոփելով հանրային ֆինանսների ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները և կատարած աշխատանքը, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

- Բյուջետային թափանցիկության ապահովումն անչափ կարևոր է ոչ միայն հանրային վերահսկողության, այլև կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու և պետական մարմինների գործունեությունը գնահատելու համար: Այսօր, սակայն, կառավարության կողմից ոչ միայն չեն ձեռնարկվում քայլեր առկա բյուջետային տեղեկատվության հանրային հասանելիությունն ու ընկալումն ապահովելու ուղղությամբ, այլև չկան ակնհայտ գործողություններ կառավարության ծրագրով նախատեսված առցանց հարթակներն ու համակարգերը մինչև կառավարության ծրագրի գործունեության ավարտը ներդնելու ուղղությամբ;
- Պատշաճ ապահովված չեն նաև պետական բյուջեի մշակման համար անհրաժեշտ հանրային քննարկումները. շատ դեպքերում դրանք կազմակերպվել են ավարտական փուլում, երբ ոչինչ հնարավոր չէր փոխել: Այսպիսով, այդ հանդիպումները կրել են միայն ձևական բնույթ՝ ստեղծելով հանրային քննարկման պատրանք;
- Թեև գումարային առումով մարդկային կապիտալին ուղղված ծախսերը (կրթություն, գիտություն և առողջապահություն) աճել են 2017 թվականի համեմատ, սակայն բյուջեի ընդհանուր ծախսերում դրանց տեսակարար կշիռը էական փոփոխության չի ենթարկվել: Հետևաբար այս ոլորտների ֆինանսավորման աճը չի կարելի համարել ոլորտային քաղաքականության բարելավման արդյունք;
- Էական փոփոխությունների չեն ենթարկվել նաև տարածքային կառավարմանը և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերը: Ավելին, նույնիսկ 2020 թվականին պլանավորված հատկացումները քիչ են 2017 թվականին փաստացի կատարված ծախսերից;
- Չկա նաև պետական բյուջեի մուտքերի կառուցվածքային փոփոխություն: Եվ եթե 2019 թվականին բյուջեի մուտքերի աճն ապահովվել է հիմնականում ԱԱՀ-ի ու մաքսատուրքերի աճի շնորհիվ, ապա 2020 թվականի բյուջետային մուտքերի հավաքագրումը պարունակում է ռիսկեր՝ ԱԱՀ-ի գծով մուտքերի ակնկալվող անկման պատճառով;
- Ընդհանուր առմամբ՝ տպավորություն է ստեղծվում, որ ՀՀ կառավարությունը իր քաղաքականությունը մշակում և իրականացնում է առանց հաշվի առնելու նախընտրական փուլում տրված խոստումները և դրանից հետո ընդունված իր գործունեության ծրագիրը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: